

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԿՈՆԻԲԵՐՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամանիա Շիրակացին 7-րդ դարի հայ մաթեմատիկոսը, տիեզերագետը, մատենագիրը թողել է մի հետաքրքիր ինքնակենսագրություն, որն արժանացել է միջազգային հայագիտության սկեռուն ուշադրությանը և հրապարակվել է ամենատարբեր լեզուներով:<sup>1</sup> Այն ռուսերեն է թարգմանել Քերովբե Պատկանյանը 1877-ին<sup>2</sup>, անգլերեն թարգմանել է Ֆրեդերիկ Կոնիբերը 1897 թվականին<sup>3</sup>, Դ. Մակվարտը և Ա. Բաուերը 1927-ին թարգմանել են անգլերեն, իսկ Ա. Բերբերյանը այն թարգմանել է ֆրանսերեն<sup>4</sup>: Դեռ 1877-ին Զ. Պատկանյանի թարգմանության տարեթվին այն վերածվել է աշխարհաբարի և հրատարակվել է «Փորձ» ամսագրում<sup>5</sup>:

Ամանիա Շիրակացու ինքնակենսագրությունը հետաքրքիր է մի շարք առումներով: Նախ, ինչպես նկատել են անվանի հայագետները՝ Ղ. Ալիշանը, Դ. Տաշյանը, Ա. Գ. Արրահամյանը և ուրիշներ, այն առաջին ինքնակենսագրությունն է հայ միջնադարյան մատենագրության պատմության մեջ: Հենց այս առումով եզակի է վերջինիս պատմական և ճանաչողական արժեքը: Անշուշտ եվրոպական հայագիտությանը պետք է հետաքրքրեր Ամանիա Շիրակացու

1. Ամանիա Շիրակացու «Ինքնակենսագրության» գիտական քննադիրը մանրամասն հետազոտությամբ, տե՛ս Ամանիա Շիրակացու մատենագրությունը, Ուսումնասիրություն, Երևան, 1944, էջ 31-42, քննական քննադիրը էջ 206-209, նաև Ամանիա Շիրակացի, Մատենագրություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Ա. Գ. Արրահամյանի և Գ. Բ. Պետրոսյանի, Երևան 1979, էջ 25-29, 331-332.:

2. Армянская география VII века, приписываемая Моисею Хоренскому СПб, 1877, стр. 94—96.

3. Buzantische Zeitschrift h. VI, 572-574, այնուհետև Կոնիբերը վերստին տպագրել է Ա. Շիրակացու Կենսագրությունը և Ջատիկի ճառը անգլերեն, տե՛ս F. C. Conybeare Ananias of Shirak (A.D. 600-650c.). 1. His autobiography, 2. His Tract on Eastern (translation from the Armenian. p. 572-584):

4. Revue des Etudes Arme'niennes, № 1, p. 189-202.:

5. «Փորձ», 1877, № 4, էջ 322-325:

նման խոշոր գիտնականի կյանքի ուղին և հատկապես կրթվելու ու գիտելիքներ ձեռք բերելու ողջ ընթացքը: Անանիայի կրթությունը, ինչպես պարզ երևում է նրա ինքնակենսագրությունից, բյուզանդական կայսրության կրթական մակարդակի հայելին կարող է լինել: Անանիա Շիրակացի երևոյթի երևան գալը Նիկողայոս Ադոնցը կապում է բյուզանդական կայսրության մեջ հանդես եկած գիտակրթական մոր հոսանքով, որը ստեղծեց գիտական և տեսական ոգով տոգորված մոր գրականություն, և որի արգասիքներից էին «նշանավոր մաթեմատիկոս Անանիա Շիրակացու աշխատությունները»<sup>6</sup>: Երրորդ կարևոր դիտարկումն այն է, որ Մովսես Խորենացու, նրա հետ ուսում առած անհատների<sup>7</sup>, նրանցից առաջ եզնիկ Կողբացու և Յովսեփ Պաղնացու արտասահմանյան գիտական կենտրոններում կրթվելը<sup>8</sup>, ինչպես նաև Ղազար Փարպեցու ուսումնառության պատմությունը<sup>9</sup>, Ղավիթ Անհաղթի ուսումնառության արտասովոր դեպքերին ավելացնում է նորը. նախորդները բացառապես օտար երկրներ ուսման մեջ կատարելագործվելու էին գնում իրենց ուսուցիչների նախաձեռնությամբ, Անանիա Շիրակացու պարագայում օտար երկիր կրթվելու մեկնելն ուներ ինքնաբուխ բնույթ, որն իհարկե, ձևավորվել էր ազգային ավանդույթի հիման վրա: Անանիա Շիրակացին մեծ հայրենասեր էր, և դա երևում է նրա ինքնակենսագրությունից. նա կամենում էր Հայաստանում զարգացնել արտաքին գիտությունները՝ հատկապես մաթեմատիկան, որը նրա կարծիքով «թագավորներին է ցանկալի», այսինքն ունի ազգային ու պետական նշանակություն. «Եվ արդ՝ ես տրուպս Հայաստանեաց ուսայ ի մմանէ զհզար արուեստս զայս, որ թագաորաց է ցանկալի և բերի յաշխարհս մեր՝ առանց ուրուք լինելու ձեռնտու, միայն ջանիս իմոյ անձինս, ազնականութեամբ աղաւթից սրբոյն Գրիգորի.....»<sup>10</sup>:

6. Ադոնց Նիկողայոս, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 236-237:

7. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, քննական բնագիրը և ներածությունը Ս. Արեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ 118:

8. Ղավիթ Անհաղթ, երկեր, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթությունները Ս. Ա. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 6:

9. Ղազար Փարպեցի, Պատմություն Հայոց, Թուրք առ Վահան Մամիկոնյան, Երևան, 1982, էջ 450:

10. Անանիա Շիրակացի, Մատենագրություն, էջ 208:

Շատ կարևոր է նաև կենսագրության երկրորդ կարևոր դեմքի՝ նշանավոր գիտնական ու մանկավարժ Տյուքիկոսի վերաբերմունքը դեպի Անանիան և վերջինիս բնածին ուսումնատենչությունը: Այս գիտնականի համար գերագույն չափանիշը աշխատասիրությունն ու ծառավն է դեպի ուսումը, որի համար նա անվերապահորեն սիրում է հայ աշակերտին: «Եւ սիրեաց զիս որպէս զորդի իւր և պարապեաց զիս յամենայն խորհրդոց իւրոց, մինչև նախանձեալ ընդ իս ամենայն աշակերտակցաց իմոց, որք ի դրանէն արքունի»<sup>11</sup>:

Այնուհետև Անանիան նկարագրում է իր ուսուցչի հարուստ գրադարանը, որից ազատորեն օգտվելու իրավունքը ստացել էր և անհագորեն կլանում էր նրանում եղած հոգևոր ու գիտական գանձերը. «Եւ արարեալ իմ առ նա ամս ը, ուսայ լիով զարուեստ համարողութեան: Նաև դոյզն ինչ յայլոցն տեղեկացայ գիտութեանց և հմուտ եղէ գրոց բազմաց որք և ոչ ի մերս են թարգմանել լեզուս. զի ամենայն կայր առ նմա՝ յայտնիք և գաղտնիք, արտաքինք արուեստականք և պատմագիրք, բժշկանք ժամանակագիրք և զի՞ ևս մի մի անուանիցեն, քանզի չիք ինչ գիրք, որ առ նմա ոչ գտաներ»<sup>12</sup>:

Այս գրադարանի նկարագրին գումարվում է մեկ այլ կարևոր փաստ. Տյուքիկոսը իմացել է հայոց լեզուն, այն սովորել է Հայաստանում զինվորական եղած ժամանակ, երբ ծառայում էր Հովհան Պատրիկի գլխավորած բյուզանդական զորաբանակում<sup>13</sup>: Նա չի մոռանում նշել իր ուսուցչի մեկ այլ առավելություն ևս՝ հմուտ թարգմանիչ լինելը: Տյուքիկոսը ուրիշ թարգմանիչների

---

11. Նույն տեղում, էջ 207:

12. Նույն տեղում, էջ 207-208:

13. Հովհան Պատրիկի Հայաստանում կատարած զինվորական գործերի մասին հետաքրքիր մանրամասներ է հաղորդում 7-րդ դարի հայ պատմիչ Սեբեոսը իր երկի տարբեր տեղերում. «Արդ՝ մինչ զայս այսպէս շփոթ ամբոխի ի մէջ Պարսից աշխարհին լեալ Հովհան Պատրիկ և զաւրք Յունաց պատեալ, պաշարեալ պահէին զքաղաքն Դունայ մատուցեալ ընդ նմա մեքենայիւքն՝ մերձ էին ի կործանել զպարիսպս» (էջ 74): «...Ամնոր ի նմանէ յերդումն, և տայր նմա զաւր կայսերական յաւգնականութիւն Հովհան Պատրիկ ի Հայոց կողմանէ, և զՆերսէս ստրատելատ յԱնտրոց և զգաւրս նոցա անցեալք ի հանդիսի, երեք հազար հեծեալ ըստ հազարաւորաց, ըստ գնդից, ըստ դրոշից իւրեանց» (էջ 77): «Եւ այս եւս սահմանակալք տէրութեանն պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաք: Վնդատական, Նիխորական. զսա սպանին զաւրքն պարսից, ի Դուին և ինքեանց ապստամբեալ զնացին ի Գեղունս: Ապա Սերկուտ, ապա Յազդէն, ապա Բուտմահ, ապա Յեմանն: Իսկ ի Յունաց կողմանէ՝ նախ Յովհան Պատրիկ, ապա Դերակդ, ապա Սորեն զաւրավար, մինչև լցան ամբ երեքտասանք հաշտութեան» (էջ 105): Ցես Պատմութիւն Սեբեոսի, աշխատասիրութեամբ Գ.Վ.Աբգարյանի, Երևան, 1979:

կարդում միանգամից հայերեն, որ կարծես թե բնագիրը գրված էր հայերեն<sup>14</sup>:

Ահա այս և ուրիշ հետաքրքիր փաստեր պարունակող ինքնակենսագրությունը չէր կարող չհետաքրքրել եվրոպացի հայագետներին: Բացի այդ, Անանիա Շիրակացու «Ինքնակենսագրությունը» գրված է շատ հստակ, առանց այն ժամանակների համար ընդունված աստվածաբանական վերացարկունների, եթե հեղինակը վկայում է քրիստոնյաների սրբազան գրքերը, ապա բերում է միայն խոսուհի փաստեր՝ իր ասածներն առավել հասկանալի դարձնելու համար: Տարդ հայագիտության մեջ կատարված չէ Կոնիբերի անգլերեն թարգմանության և գրաբար բնագրի համեմատումը: Ֆ. Կոնիբերի անգլերեն թարգմանության բաղդատումը Անանիա Շիրակացու «Ինքնակենսագրության» գիտական-քննական բնագրի հետ երևան է բերում մի շարք տարբերություններ:

Հայերեն քննական բնագրում Տյուքիկոսի մասին ասվում է.

«Գնաց ողջացեալ ի սուրբ քաղաքն Երուսաղեմ:

Եւ արարեալ անդ ամիս մի՝ փոխեցաւ յԱլեքսանդրիա

և ամս երիս կայր անդ ի հրահանգի» էջ 208:

Անգլերեն բնագիր And when I was recovered I

Went off to the city of Jerusalem

and thence to Alexandria.(p. 573):

Այս համեմատությունից պարզում ենք, որ Կոնիբերի թարգմանության մեջ բաց են թողնված Երուսաղեմում և Ալեքսանդրիայում մնալու ժամկետները: Մի տեղում նա մնացել է մեկ ամիս, մյուսում՝ երեք տարի: Անգլերեն բնագրում Տյուքիկոսը սովորել է նաև Աթենքում՝ փիլիսոփաների քաղաքում: Այդ հատվածը քննական բնագրում բացակայում է:

Հայերեն

Եւ ապա չոգաւ ի Զոռմ և արարեալ անդ տարևոր ժամանակս, գայ ի Կոստանդինապուլիս և գտանէ անդ այր երևելի, որ վարդապետէր իմաստասիրաց քաղաքին: Եւ եկաց առ նմա յուսման ժամս ոչ սակաւս և կատարեալ իմաստասիրութեամբ դարձաւ ի տեղի իւր: Թէպէտ յոյժ աղաչեալ ի հայրա-

14. Անանիա Շիրակացու «Մատենագրությունը», էջ 208:



պետէն և յիշխանաց քաղաքին, զի մի գնացէ անտի, իսկ նա ոչ անսայր մոցա՝  
յերկիր իւր գթալով ըստ գրեցելումն (էջ 208):

### Անգլերեն

And I found a teacher in Athens the city of philosophy, a famous man, with whom I spent not a few years in study. And having perfected myself in philosophy I returned to this place, and began to teach as a doctor.

Այսպիսի ոչ մեծ շեղումներ կան նաև կոմիքերյան բնագրի վերջին հատվածներում<sup>15</sup>:

Անանիա Շիրակացին մեջբերումներ ունի հին և նոր կտակարաններից, Առաքյալների թղթերից: Այդ մեջբերումները Ֆ. Կոմիքերի անգլերեն թարգմանության մեջ որոշ տարբերություններ են տալիս մեր ձեռքի տակ եղած "Holy Bible placed by the Gideons" ժողովածուից:

Բերենք մի քանի օրինակ.

Holy Bible - Because thou hast rejected knowledge, I will also reject thee. (Hosea-4,6)

F. Conybeare - If thou expel knowledge, then will I also expel thee. (Hosea-4,6)

Holy Bible - Seek, and ye shall find. (Matthew-7.7)

F. Conybeare - Seek ye and ye shall find. (Matthew-7.7)

Holy Bible - Vengeance is mine, I will repay. (Romans-12.19)

Ananias of Shirak (A.D. 600-650 c.). His autobiography. P. 574

F. Conybeare - Mine is vengeance and I will requite. (Romans-12.19)

Holy Bible - Put my money to the exchangers, and then at my coming I should have received mine own with usury. (Matthew, 25.27).

F. Conybeare - Lay my gold with the bankers, and when I come demand it with interest. (Matthew 25.27).

Ֆ. Կոմիքերյան թարգմանությունը չնչին այս տարբերություններով հանդերձ ամբողջական ձևով ներկայացնում է 7-րդ դարի նշանավոր հայ գիտնականի՝ Անանիա Շիրակացու «Ինքնակենսագրությունը»՝ այն դարձնելով միջազգային հայագիտության սեփականությունը:

---

15. Ananias of Shirak (a.d.600-650 c.). I. His Autobiography, p. 574.